ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 25 » փետրվարի 2019 թվականի N:30-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՔԱՐԱԲԵՐԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 48-րդ կետի 21-րդ ենթակետի դրույթներով, անհիմն համարելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Քարաբերդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2019 թվականի փետրվարի 19-ի բացատրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Քարաբերդի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալեքսան Ասատրյանին հայտարարել խիստ նկատողություն:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է